

ՄԵԾԱՐԵՆՅԻ ԳՐԱԿԱՆ ՆԱԽԱՔԱՅԼԵՐԸ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1964, ք. 7-9, էջ 226)

ՄԵԾԱՐԵՆՅԻ ԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԱՌՈՐՄԱՆ ՀԱՐՅԸ

Ի՞նչ կրնանք հետևել Մեծարենցի առաջին քերթումներուն ընթերցումէն:

Համառոտելով՝ կրնանք ըսել թէ անոնք, մեծ մասով, կը մատնեն խորհրդապաշտական յատակ հակում մը: Անոնցմէ մէկուն համար բաւական ընդլայնեցինք՝ Կոստանդին Երզնկացիէն մասնակի խոտորումի մը կարծիքը: միջնադարեան բանաստեղծութիւնը յիշեցնող այլ տարրեր, հետքերու ձեւին տակ, տեսանք նաեւ ուրիշ կտորներու մէջ: Այս շրջանի միւս քերթումներուն մէջ — բացի հետադարձական եւ առաւելապէս նկարագրական բնոյթով երկու հատէ, եւ ուրիշ երկու քերթումներէ՝ ուր բնութիւնը կը յայտնուի բանաստեղծին հոգիին մէջ իրբեւ քերթողական նիւթ ու ապրում, եւ որ բնութեանապաշտական յաջորդական զարգացման մը ուղին կը բանայ — ունինք:

1.— Որոշ կապեր ուսման թիղմի հետ, մանաւանդ Դուրեանի:

2.— Ենթադրաբար, յիշեցում մը Պէշիկ-Քաշկեանին:

3.— Յստակ եւ տակաւ մեծցող առաւելութիւն մը խորհրդապաշտական տարրերուն՝ նիւթին մշակման, արտայայտութեան եղանակին, եւ նոյնիսկ կարգ մը համաձայնական եւ ոճական մանրամասնութիւններու մէջ:

Ի՞նչպէս բացատրել այս երեւոյթը:

Նախ անով, ինչպէս գիտենք, որ ճիշտ միեւնոյնն էր նաեւ Պոլսոյ մէջ՝ այդ տարիներուն՝ հայ գրական տիրող տրամադրութիւնը: Եւ ոչ միայն Պոլսոյ, այլ նաեւ

գաւառին: Այսինքն, կ'ուզենք ըսել թէ խորհրդապաշտական բնորոշիչ տարրեր — եթէ ոչ նոյնինքն խորհրդապաշտական բանաստեղծութիւնը — արդէն իսկ մուտք գործած էին ժամանակաշրջանի արեւմտահայ գրականութեան մէջ: Ընդդէմէր Մեծարենցի ընկերներէն Վ. Ասլանեանի վկայութիւնը. Ասլանեան կը գրէ թէ 1902ին, Սվադի մէջ, Մեծարենցի հետ «միասին կ'ոգէինք Մալէգեանի քերթումները»:

Պէտք է քննարկել վարդի ու լիւան. Ունայնութեան խորհուրդին տակ Հոգիները յաւէտ կու լան»¹⁴⁵:

Ասիկա կը նշանակէ թէ անկապաշտական եւ խորհրդապաշտական յատակ շեշտով քերթումներ ծանօթ էին Մեծարենցին՝ տակաւին 1902ին: Գիտենք նաեւ թէ կը ճանչնար Թէքէեանի բանաստեղծութիւնները¹⁴⁶, որուն «Հոգիներ» տպուած է 1901ին, եւ կը պարունակէ նաեւ թարգմանութիւնը Վերլէնէն ու Հանրի Պեքէն երկու քերթումներուն¹⁴⁷: Տակաւին մինչեւ օրս քննական լուրջ եւ մանրամասն ուսումնասիրութիւն մը չէ եղած հայ գրականութեան մէջ խորհրդապաշտ շարժումին մասին. սակայն — բացի անկէ որ Տէմիրճի-

145. Վ. Ասլանեան, Այց մը Մեծարենցիին, «Կոչնակ Հայաստանի», 25, 1921. մէջբերուած թԱ-ի մէջ, էջ 14:

146. ԹԱ էջ 27:

147. Վահան Թէքէեան. — Երկեր, Հրատ. Վաղարշակ Նսրեանի եւ Սողոմոն Տարսնցիի, Հայպետհրատ, Երեւան, 1958, էջ 478:

պաշտանի դործը կամուրջ մըն է ուսման թիղմին եւ խորհրդապաշտութեան միջեւ — գիտենք թէ սկսնակ Մեծարենցի շրջանին՝ անկապաշտ եւ խորհրդապաշտ տարրեր կը յայտնուին ո'չ միայն Մալէգեանի եւ Թէքէեանի մէջ, այլ նաեւ ուրիշ բանաստեղծներու՝ զորս Մեծարենց կը սիրէր ու կը կարգար, ինչպէս՝ Զօպանեան եւ Զոհրապ¹⁴⁸: Ըսենք վերջապէս թէ 1902-ին արդէն Սիւսանի թիւ «Դիւցազնօրէն»ը ամբողջական եւ հարազատ խորհրդապաշտական գործ մըն է: Մեծարենց, ուրեմն, տակաւին գործ մըն է: Մեծարենց, ուրեմն, զրել եւ հրատարակել սկսելով 1901-1902ի միջեւ, ասպարէզ կը նետուի արդէն իսկ խորհրդապաշտութիւն ուղղուած դէպի խորհրդապաշտութիւն Պոլսի, ուր, մշակոյթի մը մէջ, մանաւանդ Պոլսի, ուր, օրինակի համար, 1893-1896 տարիներուն՝ Փրանսացի խորհրդապաշտ բանաստեղծ Pierre Quillard պաշտօնավարած էր Ս. Գ. Լուսաւորիէ եւ Կեղերոնական վարժարաններուն մէջ¹⁴⁹, եւ անշուշտ բաւականին ազդեցութիւն գործած:

Ժամանակաշրջանը, ուր Մեծարենց իր առաջին քալերը կ'առնէ, խոտորէն քննադատուած է սովորաբար: Մեծարենցի մասին իր յօդուածին մէջ, Հրանդ Բալու-եան շրջանը ուղղակի ոչնչութեան կը վերածէ, սահմանելով զայն «անկում»։ «Կը բաժնէ, սահմանելով զայն «անկում»։ «Կը հասնինք 1900 թուականը. հոսից կը սկսի արդէն շրջան մը՝ որուն գոյնատուրութիւնը, արտաբերած արուեստին կեղծիքը երբեք իրմէ առաջ կամ վերջ ուրիշ սերունդներ չարձանագրեցին»¹⁵⁰: Այսպէս եւ Նոսրենց, օգտակար կերպով ճշտելէ ետք շրջանին կարգ մը ընդհանուր յատկանիւնները, ինչպէս կը շեշտեն «մի շարք բանաստեղծների անձնապատան, անկումա-սիրտիկական տրամադրութիւններին, միասնական տրամադրութիւններին»¹⁵¹: Այս հարցը քննելու նպատակ չունինք հոս: Պիտի ուզէինք նկատել, սակայն, անկախ այս դատումներէն եւ ընդհանուր գիծերու մէջ, թէ անկապաշտ գրականութիւն չի նշանակել անպայման գրական անկում. անկապաշտութիւնը դեռ գրական դարձող մըն է որ, յիշեցնելով, արժէքի դատում մը չ'ենթադրել ի յառաջագուհի: Բայց կարենալ պաշտպանելու կամ

մերժելու համար այս տեսակէտը, հարկ է նախ քննել իրականութիւնը, այսինքն՝ հարկ է քննականորէն ուսումնասիրել զառաջընթացը եւ հոն գործող մեծ կամ փոքր հեղինակներուն գործերը: Կրնայ պատահել նաեւ որ պատմական եւ զեղադիտական վերլուծումով՝ փանոսեանի, Մալէգեանի եւ Պարսամեանի նման բանաստեղծներու գործը առաջնորդէ մեզ տարբեր դատաստաններու, քան ինչ որ մինչեւ օրս ծանօթ է: Չենք գիտեր. եւ աւելին, թողունք այս հարցը: Ինչ որ մինչեւ հիմա բաւական յստակ կը հետեւի այն է, մա Մեծարենց զրել կը սկսի մշակութային կյանքի մը մէջ՝ որ բացուած է դէպի խորհրդապաշտութիւն, բացուած է մա-խորհրդապաշտութիւն զօրաւոր հաղորդաւանդ մշակութային զօրաւոր հաղորդակցութիւններու: Դժբախտաբար յետոյ տեղեկութիւններ չունինք Սվադի եւ Մարգարեանի մէջ Մեծարենցի կատարած ընթերցումներուն մասին, բայց Աղատեան կը վկայէ թէ «Անատոլիա Գոլէճին» մէջ կը վկայէ թէ «Հայերէնէն առաջ կը ծանօթ Մեծարենց «Հայերէնէն առաջ կը ծանօթ Մեծարենց անգլիական գրականութեան»¹⁵². Թանայ անգլիական գրականութեան կարելի է նաեւ ենթադրել թէ այս շրջանին է իր առաջին, զոնէ տարրական ծանօթութիւնը Տանթի Կապրիէի Ռոսեթթիի եւ Օսկար Ուայլտի բանաստեղծութեան: Նոյն Աղատեանէն¹⁵³ գիտենք թէ Մեծարենց Փրանսերէն լեզուն կը սորվի Պոլսի, ինչ տարուան շրջանին, այսինքն՝ 1902ի մէկ տարուան շրջանին, այսինքն՝ 1902ի աշունէն 1903. կրնանք համարել նաեւ թէ այդ շրջանին ուղղակի ծանօթացած ըլլայ արդ շրջանին խորհրդապաշտներուն, Կե-Փրանսացի խորհրդապաշտներուն, Կե-Փրանսացի խորհրդապաշտներուն, ինչ որ կրնայ բացառել թէ ինչպէս, զեւ 1903ին, իր քերթումներուն մէջ կը յայտնուէին Պոտ-

148. ԹԱ էջ 27: Զոհրապի բանաստեղծութիւններուն Մեծարենց նուիրած է խորագրական գիրքում մը, ՀՊՀ էջ 264-268:

149. Poètes d'Aujourd'hui/ն մէջ (գործին մասին տես ծանօթ 66), հատոր Գ. էջ 22:

150. Վէմ էջ 25-26:

151. ՀՊՀ էջ 9:

152. ԹԱ էջ 15:

153. ԹԱ էջ 15:

